«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Առակի դաստիարակչական նշանակությունը սովորողների դաստիարակության գործում:

ԱՌԱՐԿԱ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Կարինե Գագիկի Հարությունյան

ՄԱՐԶ Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …….….3

ԳԼՈՒԽ 1. Առակի դաստիարակչական նշանակությունը…….....5

1.1 Առակի բնութագիրը ……..5

1.2 Առակի դաստիարակչական նշանակությունը ……7

ԳԼՈՒԽ 2. Առակի դաստիարակչական նշանակությունը սովորողների դաստիարակության գործում …….…9

2.1 Առակի ուսումնադաստիարակչական ազդեցությունը հիմնական դպրոցում……..……..10

2.2 Առակի ուսուցումը հիմնական դպրոցում ……13

Եզրակացություն …….....…….....…20

Օգտագործված գրականության ցանկ ……21

Հավելված 1……...……22

Ներածություն

Առակը գեղարվեստական հորինվածքով, բարոյախրատական բովանդակությամբ փոքրածավալ ստեղծագործություն է: Այն ունի դաստիարակչական նշանակություն և մեծ դեր է խաղում սովորողների դաստիարակության գործում:

Ժողովուրդներն իրեց պատմության ընթացքում՝ ելնելով կենսափորձից ու իմաստնությունից, ստեղծել են ասացվածքներ, առածներ, հեքիաթներ, առակներ: Առակները դարերի ընթացքում մուտք են գործել աշխարհի շատ ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի հոգևոր գանձարանը և դարձել նրա անքակտելի մաս[1]:

Ժամանակակից կրթական համակարգում անհրաժեշտություն է առաջանում նորովի մատուցում հանդես բերել լեզվի ուսուցման մեթոդաբանության նկատմամբ: Համացանցի և նոր տեխնոլոգիաների օգտագործումը զգալիորեն ընդլայնում է ուսումնական նյութի որոնման , հաղորդման և յուրացման հնարավորությունները:

Ներկայումս ուսուցչին վերապահվող կարևորագույն խնդիրներից մեկը կրթության բովանդակության կազմակերպումն է: այդ գործընթացում ուսուցիչը մի շարք այլ գործոնների հետ պետք է հաշվի առնի նյութի մատուցումը: Մատուցման նպատակադրումը պետք է լինի , գիտելիքների, հմտությունների, վերլուծական մտածողության և այլ որակների զարգացումը, ոչ թե սոսկ տեղեկատվություն հաղորդելը:

Հետազոտությունը ներկայացնում է առակները և դրանց դաստիարակչական նշանակությունը սովորողների դաստիարակության գործում: Մենք ներկայացնում ենք առակը որպես սովորողների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ և գիտելիքների կառուցմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը նպաստող գործոն: Առակները մշտապես եղել են սովորողների դաստիարակության կարևոր խթանիչներից: Առակների նպատակային ուսումնասիրությունը մայրենիի դասաժամերին նպաստում է սովորողի անհատականությանը, մտածողության զարգացմանն ու ձևավորմանը, օգնում նրան հաղթահարել կյանքի շատ դժվարություններ, ուսուցչի օգնությամբ նրա ենթաշերտերի մեջ ներթափանցելու, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու, գեղեցիկը, բարին, ազնիվը ճանաչելու և գնահատելու կարողությունները:

Հետազոտական աշխատանքի թեման է՝ Առակի դաստիարակչական նշանակությունը սովորողների դաստիարակության գործում:

[1] Ա. Դոլուխանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, էջ 51:

Հետազոտության արդիականությունը: Թեման արդիական է այն առումով, որ ուսումնասիրության նյութ հանդիսացող առակները տոգորված են հայրենասիրական բարձր ոգով, քարոզում են հոգատարություն, սեր, համերաշխություն, ընկերասիրություն, բարություն և նպաստում են երեխաների ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորմանը: Այս գործերում մերժվում են սուտն ու մնացած այլ ստորությունները, որոնք իսկապես ահռելի թափեն ստացել վերջին ժամանակներում: Մայրենիի դասագրքում բացառիկ տեղ ունեն առակները, որոնք սովորողների սիրելի ժանրերից են և բոլոր ժամանակներում մեծ դեր են ունեցել աշակերտների արժեքային համակարգի ձևավորման գործում: Այսօր էլ առակի՝ նոր մեթոդներով հսմակողմանի յուրացումը մեծացնում է նրա բարոյախրատական, մարդասիրական, ուսուցողական, դաստիարակչական, ճանաչողական նշսնսկությունը, խթանում սովորողի երևակայության զարգացմանն ու ստեղծագործական կարողությունների ձևավորմանը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է մայրենիի հինգերորդ դասարանի դասագրքում զետեղված առակները ներկայացնել արդի մեթոդներով: Սովորողների մեջ ձևավորել մարդկային բարձր արժեքներ, հոգևոր-բարոյական գիտելիքներ: Արժևորել ճշմարտախոսության սիրո, բարու, ազնվության դերը և ցույց տալ դաժանության, ստի, անհնազանդության, երախտամոռության վատ հետևանքները:

Առակների ուսուցումը որքանո՞վ կնպաստի սովորողների մարդասիրական, ազգային, բարոյական արժեքների, հոգևոր և դաստիարակչական արժեհամակարգի ձևավորմանը:

Առակների ուսուցումը և բարոյախոսության ճիշտ ըմբռնումը կնպաստի արժեհամակարգի, կարողությունների ձևավորմանը: Կօգնի դաստիարակել լավ մարդ և հասարակությանը պիտանի քաղաքացի:

Հետազոտության վերջնարդյունքները.

- Կարժևորի առակների ուսուցման դաստիարակչական դերը հիմնական դպրոցում:
- Առակների ուսուցման ժամանակ կկիրառվեն դասավանդման ժամանակակից մեթոդներ և հնարներ:
- Կներկայացվի առակների դերը սովորողների դաստիարակության զարգացման գործում:
- Կպարզվի, թե առակի ուսուցումը որքանով կնպաստի սովորողների, հոգևոր, ազգային, ժողովրդավարական և դաստիարակչական արժեհամակարգերի ձևավորմանը:

Գլուխ 1

Առակի դաստիարակչական նշանակությունը

1.1 Առակի բնութագիրը

Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է և առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը: Այդ իսկ պատճառով առակների ուսուցումը բավականին կարևոր է գիտելիք փոխանցելու տեսանկյունից[2]:

Ժողովուրդներն իրենց պատմության ընթացքում՝ ելնելով կենսափորձից ու իմաստնությունից, ստեղծել են ասացվածքներ, առածներ, հեքիաթներ, առակներ: Առակները դարերի ընթացքում մուտք են գործել աշխարհի շատ ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի հոգևոր գանձարանը և դարձել նրա անքակտելի մասը: Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է: Այն փոքրածավալ, այլաբանական բովանդակություն ունեցող պատմողական ստեղծագործություն է, որում հաճախ մարդկանց փոխարեն հանդես են գալիս կենդանիներ, բույսեր, տիեզերական մարմիններ, որոնք անձնավորված են[3]:

Առակներն ունեն քնադատական, խրատական, հաճախ երգիծական բովանդակություն և խորը դաստիարակչական նշանակություն: Նրանցում քննադատվում են մարդկային վատ հատկանիշներն ու գովաբանում լավը, բարին: Առակներն առաջացել են Հին Հունաստանում և հին քաղաքականություն ունեցող այլ երկրներում: Հնագույն առակագրության ամենախոշոր դեմքը հույն հեղինակ Եզոպոսն է (Ք. ա. 6-րդ դ.), ում առակները թարգմանվել են մի շարք լեզուներով, յոթերորդ դարում՝ նաև հայերեն: Հայ գրականության մեջ առակներ երևում են միջնադարից: 11-րդ դարի հայտնի մանկավարժ, պետական գործիչ, մատենագիր Գրիգոր Մագիստրոսը իր թղթերում օգտագործել է բազմաթիվ առակներ: Առակներ կան նաև Աստվածաշնչում: Հիսուսը շատ հաճախ խոսում է առակներով, որպեսզի իր խոսքն ավելի պարզ ու հասկանալի լինի: Նա առակը բաժանում է երկու մասի՝ բուն առակ և առակից բխող եզրակացություն: Որոշ առակներ

---

2 Ա. Դոլուխանյան , Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 69:

3 Ա. Դոլուխանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, էջ 51:

առնչություններ ունեն նաև առած-ասացվածքների հետ և շատ հաճախ դրանց հաստատումն է: Հայ առակագրության ասպարեզում հանդես են գալիս երկու խոշոր հեղինակներ՝ նշանավոր գիտնական, մանկավարժ և օրենսդիր Մխիթար Գոշը (12-րդ դ.) և Մ. Գոշի կրտսեր ժամանակակից, 12-13-րդ դարերի նշանավոր քարոզիչ, հասարակական գործիչ Վարդան Այգեկցին:

Մ. Գոշի առակներում հիմնականը կենտրոնացված միապետության գաղափարն է: Ուստիև հպատակները պետք է հնազանդ լինեն պետության գլուխ կանգնած թագավորին:Իսկ վերջինս էլ պիտի լինի արդարամիտ, հարգի հպատակների իրավունքները: Միայն այդ պայմաններում ամուր ու հաստատուն կլինի պետության հիմքը: Սա ժամանակի պետության բարձր մտածողության արտահայտությունն էր:

Վ. Այգեկցին էլ իր առակներով ձգտել է նպաստել ժողովրդի մարտական ոգու ուժեղացմանը: Նա ուսուցանում է, որ խաղաղ ժամանակ արդեն պետք է պատրաստվել վերահաս պատերազմին: Եվ պատերազմի պիտի գնալ ոչ թե փախչելու, այլ՝ կռվելու և հաղթելու մտադրությամբ:

Առակներ կան նաև Աստվածաշնչում: Հիսուսը շատ հաճախ խոսում է առակներով, որպեսզի իր խոսքն ավելի պարզ ու հասկանալի լինի: Նա առակը բաժանում է երկու մասի՝ բուն առակ և առակից բխող եզրակացություն: Որոշ առակներ առնչություններ ունեն նաև առած-ասացվածքների հետ և շատ հաճախ դրանց հաստատումն է: Ըստ հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշչի մայրենիի ծրագրով որոշակի պահանջներ են առաջադրված աստվածաշնչյան առակների ուսումնասիրման վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են առակի ոչ միայն այլաբանական առանձնահատկությունների, տեսակների տարբերակման, այլև՝ խոր ու բազմակողմանի ուսումնասիրության, ստեղծագործական կարողությունների զարգացման ու ձևավորման համար:

1.2 Առակի դաստիարակչական նշանակությունը

Առակներն ունեն քնադատական, խրատական, հաճախ երգիծական բովանդակություն և խորը դաստիարակչական նշանակություն: Նրանցում քննադատվում են մարդկային վատ հատկանիշներն ու գովաբանում լավը, բարին: Յուրաքանչյուր առակագիր յուրովի է ներկայացնում իր առակը և տալիս առակի դաստիարակչական նշանակության իր տարբերակը:

Օրինակ՝ Մ. Գոշը ուսուցանում է լինել հնազանդ տերերին, իսկ տերերն էլ հարգեն իրենց հպատակներին:

Վ. Այգեկցին էլ իր առակներով ձգտել է նպաստել ժողովրդի մարտական ոգու ուժեղացմանը: Նա ուսուցանում է, որ խաղաղ ժամանակ արդեն պետք է պատրաստվել վերահաս պատերազմին: Իր առակներում, յուրացնելով ժողովրդական իմաստնությունը և դարավոր կենսափորձը, առողջ հումորով ծաղրել ու պարսավել է նաև չարախոսությունը, խաբեությունը, անմտությունը, դավաճանությունը, վախկոտությունը և բազում այլ արատներ:

Առակների մեջ իրենց ուրույն տեղն ունեն Աստվածաշնչյան առակները: Դրանք տարբերվում են այն առակներից, որտեղ հեքիաթային տարրեր կան, խոսող թռչուններ ու գազաններ: Հիսուսի առակները իրական կյանքից վերցված պատմություններ են:

Հիսուս Քրիստոսն իր միտքը առավել հասկանալի դարձնելու նպատակով հաճախ խոսում էր առակներով.

-Ես ձեր հետ պիտի ձեր լեզվով խոսեմ, որովհետև եթե իմ լեզվով խոսեմ, դուք չեք հասկանա:

Առակները մշտապես եղել են դպրոցականի դաստիարակության կարևոր խթանիչներից: Աստվածաշնչյան առակների նպատակային ուսումնասիրությունը մայրենիի դասաժամերին նպաստում է դպրոցականի անհատականությանը, մտածողության զարգացմանն ու ձևավորմանը, օգնում նրան հաղթահարել կյանքի շատ դժվարություններ, ուսուցչի օգնությամբ նրա ենթաշերտերի մեջ ներթափանցելու, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու, գեղեցիկը, բարին, ազնիվը ճանաչելու և գնահատելու կարողունակությունները:

Աստվածաշունչը պատգամում է, որ Աստծո կողմից «իր պատկերմամբ ու նմանությամբ» ստեղծված բոլոր մարդիկ հավասար են և հավասար իրավունքներ ու պարտականություններ ունեն: Այսինքն՝ Աստվածաշնչյան առակները սովորողների մեջ սերմանում են նաև հավասարություն:

Առակի ուսուցման ժամանակ ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի ո՛չ միայն անհրաժեշտ ու կայուն գիտելիքներ հաղորդելու խնդրին, այլև երեխաների բարոյական

դաստիրակության հարցերին, քանի որ մարդու դաստիրակությունը շատ կարևոր է, իսկ գիտելիքներ կարելի է ձեռք բերել ցանկացած պահի: Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման գործընթացն այնպես պետք է կազմակերպել, որ մայրենի լեզվով կարդալ և ընթերցածը պատմել սովորեցնելուց զատ, ձևավորվեն ստեղծագործական ենթատեքստը հասկանալու, հերոսների գործողությունները վերլուծելու, լավը վատից, չարը բարուց տարբերելու, դրանց մասին դատողություններ անելու, համեմատելու և հակադրելու կարողություններ: Առակները խորը դաստիարակչական նշանակություն ունեն, նրանցում հեղինակը գովաբանում է աշխատասիրությունը, բարությունը, արդարամտությունն ու ազնվությունը, դրվատում շահամոլությունը, ստախոսությունը, պարծենկոտությունն ու ծուլությունը: Առակները կարևոր դեր ունեն երեխաների դաստիարակության գործում, քանի որ նրանք երեխաների մեջ դաստիարակում են այնպիսի որակներ, որոնք անհրաժեշտ են լավ մարդ ու հասարակության արժանի քաղաքացի ձևավորելու հարցում: Ցավոք չարությունն ու խաբեությունը այժմ շատ տարածված են և հասարակությանը «դարձի բերելու», ճիշտ ուղու վրա դնելու համար անհրաժեշտ է նախ կրթել, ճիշտ ուղու վրա դնել երեխաներին: Երեխաները ազգի ապագան են, և նրանց դաստիարակությունից է կախված ազգի հետագա ճակատագիրը:

Գլուխ 2

Առակի դաստիարակչական նշանակությունը սովորողների դաստիարակության գործում

2.1 Առակի ուսուցման դաստիարակչական ազդեցությունը հիմնական դպրոցում

Ժողովրդական ստեղծագործությունները, այդ թվում նաև առակներիը մեծ ազդեցություն են ունենում սովորողների դաստիարակության գործում: Առակներում կենդանիների, ինչպես նաև մարդկանց միջոցով հեղինակները վեր հանելով մարդկային արատները, թերությունները սովորողներին ծանոթացնում են մարդու բնավորության լավ և վատ կողմերին, ինչպես հաղթահարել յուրաքանչյուր դժվարություն: Առակները խորը դաստիարակչական նշանակություն ունեն, նրանցում հեղինակը գովաբանում է բարությունը, ազնվությունը, աշխատասիրությունն ու արդարամտությունը, դրվատում շահամոլությունը, ստախոսությունը, ծուլությունն ու պարծենկոտությունը: Առակները կարևոր դեր ունեն երեխաների դաստիարակության գործում, քանի որ նրանք երեխաների մեջ դաստիարակում են այնպիսի որակներ, որոնք անհրաժեշտ են լավ մարդ ու Հայաստանի արժանի քաղաքացի ձևավորելու հարցում: Ցավոք, չարությունն ու խաբեությունը այժմ շատ տարածված են և հասարակությանը «դարձի բերելու», ճիշտ ուղու վրա դնելու համար անհրաժեշտ է նաև կրթել, ճիշտ ուղու վրա դնել երեխաներին: Երեխաները ազգի ապագան են և նրանց դաստիարակությունից է կախված ազգի հետագա ճակատագիրը:

Աստվածաշունչը պատգամում է, որ Աստծո կողմից «իր պատկերմամբ ու նմանությամբ» ստեղծված բոլոր մարդիկ հավասար են և հավասար իրավունքներ ու պարտականություններ ունեն: Մեր օրերում Աստվածաշնչի այս կարևոր պատգամը հաճախ անտեսվում է՝ դառնալով անվերադարձ կորուստների պատճառ: Հասարակության աննախադեպ շերտավորումն ու բևեռացումը լուրջ խնդիրների առջև է կանգնեցնում մատաղ սերնդի դաստիարակության կազմակերպիչներին: Տարբեր բևեռներում են հայտնվում նաև երեխաները, որոնց ճնշող մեծամասնությանը համակում են անլիարժեքության, ընկճվածության, իսկ մի աննշան մասին՝ սեփական անձի գերագնահատման ու մեծամտության զգացումները: Ճնշող մեծամասնությունը լցվում է նախանձով, ինչը կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ, իսկ աննշան մասի մեջ կարող են ձևավորվել աշխարհընկալման վտանգավոր սկզբունքներ: Այս պարագայում ակնհայտ է, որ խախտվում է աստվածաշնչյան «սիրիր մերձավորիդ» պատվիրանը: Երեխաների մոտ ծլարձակվող սերմերն, անշուշտ, պարարտ հող են ստեղծում

նախանձի սնուցման համար, ինչը, ըստ Աստվածաշնչի, վերջիվերջո կարող է «հասցնել ատելության, հանցագործության ու ստի», մյուս կողմից էլ նրանց վարակում են ուրիշներից հետ չմնալու, ցանկացած ճանապարհով հարստանալու մոլուցքը: Երեխաներին այս ամենից հեռու պահելու, նրանց դաստիարակությունն աստվածաշնչյան պատվիրանների ոգով կազմակերպելու գործընթացներում շատ անգնահատելի է գրականության դերը: Աստվածաշնչյան թեմաների ու մոտիվների անդրադարձը «…առկա է եղել դեռևս հայ դասական գրականության մեջ (Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Պետրոս Դուրյան, Հովհաննես Թումանյան…), սակայն այժմ այն ձեռք է բերել նոր հնչեղություն և բավական հետաքրքիր մոտեցում ու մեկնություն: Բազմաթիվ հայ գրողներ են իրենց պարտքը համարում վերադառնալ աստվածաշնչյան թեմաներին և նորովի կերտել Աստծո Որդու կերպարը»[4]: Աստվածաշնչյան առակը խոսքի արտահայտման այնպիսի ձև է, որն ասելիքը բացատրում և ներկայացնում է առանձին, մի օրինակի միջոցով կատարված ընդհանրացմամբ: Հենց այդ օրինակի միջոցով է հեղինակը վեր հանում ոչ դրական, դատապարտելի ու մերժելի իրողությունները, հաճախ ծաղրում, համեմում այլաբանությամբ: Եզրափակիչ՝ խրատական, հատվածում արդեն սուր ու տեսանելի շարադրանքով մերժում ու պարսավում է այս կամ այն իրողությունը՝ փորձելով ընթերցողին ցույց տալ կյանքն իր ողջ գույներով, սովորողի առաջ բացել մարդկային էության զազրելի, տհաճ ու դատապարտության արժանի կողմերը: Առակի պատմողական մասը ժանրային առումով նրան մոտեցնում է հեքիաթին, հատկապես հրաշապատում-կենդանական հեքիաթին, սակայն առակի ժանրային առանձնահատկությունը ամփոփված է հենց խրատական հատվածում՝ «առակս ինչ կցուցանե»: Այս առումով տեղին է նշել, որ Աստվածաշնչյան առակների ուսուցումը, դրանց իմաստի ընկալումն ու հիմնական մտքի բացահայտումը բավականաչափ արդյունավետ ու նպատակային է հանրակրթական դպրոցում: Անշուշտ, առակի ժանրային առանձնահատկությունից բխող խրատական մասը, որպես կրթադաստիարակչական մի ուրույն գործիք մեծ ազդեցություն ունի սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում : Ուստի Աստվածաշնչյան առակների օգնությամբ կարելի է միանգամից մի քանի հարցեր լուծել՝ կրթել, հոգևոր և բարոյական դաստիարակություն սերմանել, ուղղորդել, մտքերը յուրօրինակ ձևավորելու, տրամաբանելու, նոր աշխարհայացք դրսևորելու կարողությամբ օժտել: Արդյունքում՝ խթանվում է սովորողների ընթերցելու, պատմելու, վերարտադրելու կարողությունը, իսկ Աստվածաշնչյան առակների խրատական հատվածը թույլ է տալիս, որ սովորողի մոտ

4 Շարուրյան Հայկանուշ, Հիսուս Քրիստոսի կերպարը հայ և ամերիկյան գրականության մեջ, ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Երևան, 2014, № 1, էջ 74:

զարգանա ինքնուրույն դատողություն անելու, պատկերավոր մտածելու կարողությունները: Այս ամենի վերջնարդյունքում կարող ենք արձանագրել, որ աստվածաշնչյան առակներով կարելի է սովորողների մեջ սերմանել հոգևոր դաստիարակչական գիտելիքներ, ինքնուրույն մտքեր հաղորդելու, վերլուծելու, բանավիճելու եզրահանգումներ կատարելու, սեփական կարծիքը ազատ արտահայտելու կարողություններ:
«Սիրտդ տուր խրատի ու ականջներդ գիտության խոսքերին», գուցե այս ասացվածքով կարելի է էլ ավելի շեշտադրել առակի խրատական առանձնահատկությունները, որոնց շնորհիվ դարեր շարունակ սերունդներ են կրթվել, առակի ցույց տված ճիշտ ուղով քաղաքակրթություններ են ձևավորվել ու դաստիարակվել: Այս մասին վառ վկայություն է Աստվածաշունչը՝ ի դեմս Քրիստոսի առակների: Աստծո որդին ևս լավի, բարու ու գեղեցիկի սերմերը ցանում էր հենց առակների մեջ՝ ի ցույց դնելով համամարդկային բոլոր հատկանիշները: Ինչպես
հայտնի է՝ առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախրատական մասից, որոնք անքակտելիորեն լրացնում են միմյանց: Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ նկարագրությունն է, իսկ բարոյախոսությունը՝ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը: Աստվածաշնչյան առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության դատապարտելի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն՝ նպատակ ունենալով դարձի բերել վերջինիս: Աստվածաշնչյան առակներում գովաբանվում և խրախուսվում են արդարը, գեղեցիկը, լավն ու բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը: Հաշվի առնելով առակի ժանրային առանձնահատկությունները՝ կարծում ենք, որ դրա ուսուցման շրջանակներում ուսուցիչը լայն հնարավորություններ ունի նաև սովորողների դաստիարակության տեսանկյունից: Առակի ժանրը և հատկապես Աստվածաշնչյան առակները ուսուցչի համար արդիական ու տեսանելի օրինակ են, որպեսզի վերջինս կարողանա անուղղակի կերպով ինչ-որ կարևոր միտք հասցնի սովորողին: Տեսանելի օրինակ է, քանի որ սովորողն ինքն է տեսնում վատ ու սխալ օրինակը, ըմբռնում հիմնական գաղափարը, իսկ ահա խրատական հատվածում կարողանում է հանդես գալ դատավորի, քննադատի դերում: Այսպիսով, բուն կրթական ընթացքին զուգահեռ երեխան ինչ-որ առումով ինքնադաստիարակվում է, իր պնդումներով դատապարտում վատ ու մերժելի արարքներն ու երևույթները: Սակայն որպեսզի սովորողին հետաքրքրի քննարկումը ստեղծագործության շուրջ, այն պիտի լինի մատչելի, սովորողի ներաշխարհին ու մտածելակերպին համահունչ: Ուստի կարևոր է, թե ինչ հմտություններ ու կարողություններ կզարգացնի ստեղծագործությունը,ինչպիսի զգացումներ կպարգևի սովորողին: Շատ կարևոր է, որ ուսուցանվող նյութը ունակ լինի դաստիարակել սովորողին՝

ցույց տալով բացառապես կյանքի դրական կողմերը՝ քաջությունը, հերոսությունը, արդարությունը, ազնվությունը, կամեցողությունը, ընկերասիրությունը: Քանի որ ժամանակակից մանկավարժության նպատակն է դաստիարակել, կերտել քննադատական միտք ունեցող, ինքնուրույն, ինքնակրթությամբ մշտական զարգացումը կարևորող, բարձր պատասխանատվություն հասարակության անդամ, անհատ, որը կկարողանա համարձակ ընդառաջ գնալ այն բոլոր մարտահրավերներին, որոնք ժամանակը մշտապես դնելու է իր, իր հայրենիքի և աշխարհի առջև: Աստվածաշնչյան առակների բնորոշումից պարզ երևում է, թե որը կարող է լինել դասավանդման ճիշտ ուղին, որպեսզի չխամրի դրանց գեղարվեստական արժեքը, չխաթարվի ճանաողական, գեղագիտական ու դաստիարակչական ազդեցությունը: Առակների միջոցով է, որ դպրոցականը ընկալում է մայրենի լեզվի բարձրարժեքությունը, Աստծո ամենազորությունը, միասնակությունը և այլն: Առակների ուսուցողական արժեքն անվիճելի է, քանզի այն, ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել երեխայի համար, կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով: Աստվածաշնչյան մի շարք առակներում էլ երևում է հասարակական շերտավորումը և սոցիալական պայքարի առկայությունը: Մարդիկ դատում ու դատապարտում են իշխաններին, տրտնջում թագավորներից, նույնիսկ՝ Աստծուց: Սակայն աստվածաշնչյան առակները սովորեցնում են, որ ժողովուրդը պետք է հնազանդվի իշխողներին, իսկ վերջիններս պարտավոր են նրանց պահպանել օտար կեղեքիչներից ու վտանգից: Այստեղ այլաբանորեն կոնկրետ մարդն է նկարագրվում՝ իբրև գյուղացի, քաղաքացի, ազնվական և այլն:

Հիմնական դպրոցում առակների ուսուցման համատեքստում ուսուցիչը կարող է հասնել դրական արդյունքի՝ զարգացնել պատկերավոր մտածողություն, համակցված ու քերականորեն ճիշտ շարադրված խոսք, գեղագիտորեն դաստիարակել սովորողին, լուծել մի շարք վարքային խնդիրներ, խրախուսել սովորողի ինքնուրույն դատողություններ կատարելու կարողությունը, ընթերցած նյութի ճիշտ ու հետաքրքիր վերարտադրելը: Այսպիսով, առակների ուսուցման ընթացքը մեծ ներգործություն ունի սովորողների դաստիարակության վրա: Մանկավարժական աշխատողը պարտավոր է ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ[5]: Դասը պետք է լինի ճիշտ ու նպատակային, դասի փուլերը պետք է լինեն տրամաբանորեն շաղկապված,

5 https://www.arlis.am/documentview.aspx?docid=74345 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 2:

դիդակտիկ նյութերը, զննական պարագաները, դասին ՏՀՏ գործիքների առկայությունն ու նոր ու ակտիվ մեթոդները մեծապես կարող են պայմանավորել սովորողների թե՛ ուսուցման, թե՛ դաստիրակության հոգևոր և բարոյական գործընթացների արդյունավետությանը:

2.2 Առակի ուսուցումը հիմնական դպրոցում

Առակների ուսուցումը հիմնական դպրոցում նպատակ ունի վեր հանել պետական չափորոշչով սահմանված մի շարք վերջնարդյունքների դրական ուղղությունները: Դրանք բազմազան են, ունեն տարաբնույթ նշանակություն և փոխկապակցված են միմյանց հետ: Հիմնական դպրոցում մայրենիի դասին կարևոր նախադրյալ է հանդիսանում սովորողի ընթերցած նյութի՝ այս պարագայում առակի վերարտադրման կարողության և դրա դերի ու նշանակության արժևորումը դասանյութի ընթացքում: Սովորողը պետք է կարողանա հանձնարարված նյութը այնպես յուրացնել, որի արդյունքում կձևավորվի հետաքրքրություն տվյալ առակի նկատմամբ, հասկացածը ճիշտ վերարտադրելու և վերլուծելու հնարավորություն, առակի իմաստը մեկնաբանելու և վերջնարդյունքի հասնելու նպատակի ձևավորում: Հանձնարարված նյութը բանավոր վերարտադրելիս սովորողի մոտ ձևավորվում է բանավոր խոսքը ճիշտ կառուցելու ունակություն, բառապաշարի հարստացում, պատկերավոր խոսք կազմելու վարպետություն, ինչը սովորողի մոտ կնպաստի տրված դասանյութը ոչ թե անգիր վերարտադրելուն, այլև յուրացված դասը հասկանալի ու դյուրին ներկայացնելու հնարավորություն: Շատ կարևոր է մայրենիի դասաժամի ընթացքում սովորողների համար պայմաններ ստեղծել, որ դասի ընթացքում սովորողի դերը լինի ավելի ակտիվ, նա ուղղակի կերպով լինի դասի ընթացքի կենտրոնում, հնարավորինս կարողանա խոսել, հասկացածը մեկնաբանել, կարծիք հայտնել, բնավիճել: Այսպիսի ուսուցումը կնպաստի սովորողի մոտ զարգացնել գեղեցիկ, կապակցված խոսք ձևավորելու հմտություն, ուշադրություն:
Առակների ուսուցման շրջանակներում կարելի է կիրառել դերախաղ, բեմադրել առակը, ապա T-աձև աղյուսակի կիրառությամբ դասդասել հերոսների դրական ու բացասական հատկանիշները: Կիրառելով Վեննի դիագրամ, քառաբաժան մեթոդամանկավարժական հնարները՝ նույնպես կարելի է հարթակ ստեղծել, որ սովորողն ակտիվ կերպով արտահայտի սեփական դիրքորոշումը՝ ընդհանրացնի, նմանություններ ու տարբերություններ գտնի: Առակի ուսուցումը նպաստում է սովորողների ընթերցասիրությունը, բարելավում կարդալու որակական հատկանիշները, զարգանում է ստեղծագործական միտքը, գեղեցիկ և ինքնուրույն խոսքը: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ առակի ուսուցումը հիմնական դպրոցում բավական դրական ազդեցություն է ունենում սովորողի վրա՝ ընդ որում այդ դրական ազդեցությունը համակողմանի է և ունի տարբեր նպատակներ.

● *Նպաստում է սովորողի ինքնուրույն կարծիքի, դիրքորոշման անկաշկանդ արտահայտմանը, արգացնում է պատկերավոր մտածողությունն ու ստեղծագործական միտքը:*

● *Ներմանում է հոգևոր և բարոյական դաստիարակություն, բարություն, լավի ու վատի սահմանը տարբերակելու իմացություն:*

● *Ձևավորում է գեղագիտական ճաշակ, դաստիարակում է կամային բարձր, ազնիվ հատկանիշներ:*

● *Նպաստում է սովորողի կարդալու, պատմելու, ոչ մեխանիկորեն վերարտադրելու կարողությունների զարգացմանը:*

● *Հարստացնում է սովորողի բառապաշարը, կապակցված խոսք կազմելու հմտությունները:*

● *Խրախուսում է ընթերցանությունը, զարգացնում է դատողելու, այս կամ այն իրողությունը հատկանշավորելու, տարբերություններ ու նմանություններ գտնելու կարողություն:*

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարաները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Մենք դասապրոցեսը բաժանում ենք 3 մասի և յուրաքանչյուրի համար առաջարկում մեթոդներ և հնարներ՝

1. դասի սկիզբ
2. նոր նյութի բացատրություն
3. սովորածը պարզելու հնարներ:

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: Դիտարկենք աստվածաշնչյան առակների մեթոդական մի քանի հնարներ, որոնք արդյունավետ կերպով մեծ ազդեցություն կունենան սովորողների կրթության և դաստիարակության համար: Որպես դիտարկման օրինակ գործածվել է հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագրքում ընդգրկված Հիսուսի առակները, մասնավորապես՝ **«Երեք ծառաների առակը»** առակը:

1. Զրույց «Հիսուսի առակները» հասկացության շուրջ

Զույգային աշխատանքի միջոցով կարելի է կիրառել **«Հասկացությունների քարտեզ»** մեթոդական հնարը: Այսպես, նախ ուսուցիչը մեկ անգամ ևս հարցնում է, թե որ ժանրին է պատկանում **«Երեք ծառաների առակը»** ստեղծագործությունը (Աստվածաշնչյան առակ): Ապա առջարկում է իրենց տրված ծրարներից ընտրել այն բառերն ու արտահայտությունները, որոնք առնչվում են «աստվածաշնչյան առակ» հասկացության հետ: Զույգերն ընտրում են համապատասխան բառերն ու արտահայտությունները և կազմում հասկացությունների քարտեզ: Քարտեզը կազմում են հետևյալ կերպ·



Բավական արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել առած, թևավոր խոսք և այլն, ստեղծելով աշխատանքային տրամադրութուն: Մինչ «Երեք ծառաների առակը» ընթերցելը կարելի է գրատախտակին գրել հետևյալ արտահայտությունը. «**Յուրաքանչյուր ոք, ով շնորհ ունի, նրան կտրվի և կշատացվի, իսկ ով չունի, նրանից կվերցվի նաև ունեցածը**»:

Ինչպես նաև դիտում են նկարազարդումը և պատասխանում, թե ի՞նչ բովանդակություն կունենա այս առակը: Սովորողներին տրվում է 5 րոպե, որպեսզի ազատ շարադրեն իրենց մտքերը: Վերջացնելուց հետո աշակերտները ազատ ու անկաշկանդ ներկայացնում են իրենց գրառումները:

Աշխատանքի սկզբնական շրջանում հնչող կրկնություններից վախենալու կարիք չկա, որովհետև սովորողներն աստիճանաբար կվարժվեն իրար լսելուց հետո չկրկնել արդեն ասվածը: Ապա լուռ ընթերցում են «Երեք ծառաների առակը» և պատասխանում են հետևյալ հարցերին.

Հարցեր.

- Հաստատվեցի՞ն ձեր կատարած կանխատեսումները տեքստի բովանդակության վերաբերյալ:
- Ովքե՞ր էին առակի հերոսները:
- Ինչպե՞ս վարվեց տերը իր ծառաների հետ առակի սկզբում:
- Ծառաներն նչպե՞ս օգտագործեցին իրենց արծաթները:
- Ինչպե՞ս վարվեց տերը::
- Այս առակը ի՞նչ նպատակ էր հետապնդում:

Ուսուցիչը մուտքի դասը հետաքրքիր և նպատակային կազմակերպելու համար վերլուծություններ ու եզրահանգումներ է կատարում տեքստի բովանդակության շուրջ: Ուսումնասիրելով աստվածաշնչյան առակները՝ ուսուցիչը մուտքի դասի ժամանակ կարող է խոսել նաև այն ազդեցությունների մասին, որոնք մեծ դեր են խաղում «Երեք ծառաների առակը» դաստիարակչական հատկանիշների ձևավորման գործընթացում:



✓ **5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացրած նյութը:**

Նպատակահարմար է նաև ուսումնադիտողական պարագաների, տեխնիկական միջոցների օգտագործումը: Աստվածաշնչյան առկների ընթերցում և տեսանյութերի դիտում՝https://m.youtube.com/watch?v=J-l_DhZwiec : Նոր նյութը բացատրելուց հետո ուսուցիչը դադար է վերցնում և աշակերտներին առաջարկում գրել, թե ինչ հասկացան նոր նյութից.

Որ այսօր սովորեցիք



Յուրաքանչյուր առակ ունի բարոյախրատական մեծ նշանակություն: Առակի լիարժեք ու մանրակրկիտ ուսումնասիրությունը հսկայական ազդեցություն ունի աշակերտների **ժողովրդավարական** արժեհամակարգի ձևավորման հարցում: Վարդան Այգեկցին իր «Բարին ու Չարը» առակում քննադատում է եսասիրությունը, չարությունը, նախանձն ու չկամությունը: **<u>Խթանման փուլը</u>** սկսել «**Մտագրոհ**» մեթոդով, որի ընթացքում ուսուցիչը գրատախտակին գրում է նախանձ բառը, իսկ աշակերտները նշում են այն բառերը, որոնք իրենց մտքում ասոցացվում են նախանձ բառի հետ:



Նշված առակում Չարը չարով կորավ, իսկ Բարին բարությամբ լցվեց: Առակի բարոյախոսությունն է՝«Ով ուրիշին հոր փորի, ինքը կընկնի մեջը□:

<u>Իմաստի ընկալման փուլում</u> աշակերտներին հանձնարարել մտաբերել այնպիսի ստեղծագործություններ, որոնց հիմնական գաղափարը համապատասխանում է առակի բարոյախոսությանը, համեմատել դրանք, առանձնացնել տարբերությունները:

Այս առակը նման է Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը հայկական ժողովրդական հեքիաթին:

<u>Կշռադատման փուլում</u> հանձնարարել աշակերտներին ներկայացնել եսասիրության վատ կողմերը և ներկայացնել կատարյալ մարդու իրենց իդեալը: Աշակերտները լրացնում են Quizziz[6] առցանց գործիքով կազմված հարցաշար, որից հետո հանձնարարվում է տնային աշխատանք: Գրական երկին զուգահեռ հինգերորդ դասարանում աշակերտներն ուսումնասիրում են հնչյունաբանություն և բառագիտություն:

Այս առարկին զուգընթաց ուսումնասիրվում է «**վանկը**»: Հնչյունաբանության ուսուցումը պետք է կազմակերպել գրական նյութի հիման վրա: Վանկի մասին խոսելիս կարելի է առակներից ընտրել որոշակի բառեր, գրել դրանց հոմանիշները կամ հականիշները, բաժանել դրանք վանկերի, որոշել վանկի տեսակը, գաղտնավանկի առկայությունը, այնուհետև բառերը գործածել նախադասությունների մեջ:

Առակների բարոյախոսության ճիշտ ընկալման դեպքում աշակերտները հասկանում են, որ իրենք ազատ են և կաշկանդված չեն տվյալ առարկայի շրջանակներում, նրանք առակների մոտիվներով նկարազարդումներ են կատարում, գրքեր են կազմում, երգեր են կատարում, հարստացնում են սեփական բառապաշարը, երբեմն բացահայտում իրենց տաղանդը:

Ծնողներից շատերը մտածում են, որ իրենց երեխայի համար կարևորագույն արժեքը, որ պիտի վերցնի դպրոցից, գիտելիքն է: Անհրաժեշտ է բացատրել նրանց, որ գիտելիքը դառնում է երկրորդական, երբ մենք խոսում ենք մարդ դաստիարակելու բարոյական արժեքների մասին: Մեզանից յուրաքանչյուրի գերխնդիրը պիտի լինի դաստիարկել խելացի, հայրենասեր, ժողովրդավար, հոգատար անհատներ, մարդիկ ովքեր կկառուցեն մեր երկրի վաղվա օրը: Առակների ուսուցումը հսկայական մասնաբաժին ունի երեխաների մոտ այս արժեքները ձևավորելու հարցում:

Թեմայի ուսուցման վերջնարդյունքները

Աշակերտները կկարողանան՝

- Բացատրել առակի այլաբանությունը:
- Առանձնացնել առակի գլխավոր միտքն ու ընթերցողին տրվող խրատը:

[6] https:

- Փոխել առակի բովանդակությունը, հավելել հերոսներ, հնարել նոր սկիզբ կամ ավարտ:
- Կգիտակցեն առակի դաստիարակչական դերը իրենց և շրջապատի կյանքում:

Կձևավորեն հետևյալ կարողությունները՝

- Լեզվական գրագիտության կարողունակություն
- Սովորել սովորելու կարողունակություն
- Մեդիա գրագիտության կարողունակություն
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն:

Եզրակացություն

Առակը ժողովրդական բանահյուսության ամենասիրելի և դյուրըմբռնելի տեսակներից է, որում ներկայացվում են ժողովրդի մտածելակերպը, սովորությունները, չարի ու բարու, լավի ու հավատի մասին պատկերացումները: Նրանում արտացոլվել են հասարակական ու սոցիալական կյանքում եղած բազմաթիվ երևույթներ, բացահայտվել մարդկային հոգու և մտքի տվայտանքները, հեգնել երկրի հոգևոր ու աշխարհիկ տերերին, արտահայտել երջանիկ կյանքի երազանքը: Առակներում այլաբանորեն, կենդանական, բուսական աշխարհի միջոցով, ներկայացվում են մարդկային կյանքի որոշակի կողմեր, գովերգում են լավը և քննադատում՝ վատը:

Հիմնվելով հետազոտության մեջ արված պնդումների և մեր մանկավարժական գործունեության վրա՝ վերահաստատենք մեր այն պնդումը, որ առակները դաստիարակչական մեծ ազդեցություն ունեն սովորողների դաստիարակության, անձի ձևավորման վրա: Հետազոտական աշխատանքում զետեղված դասի պլան- օրինակով, ակտիվ, նոր մեթոդներով, դիդակտիկայով հագեցած դասը կարող է հարստացնել սովորողների բառապաշարը, վերարտադրելու կարողությունը, իսկ ուսուցիչը սովորողների մեջ կզարգացնի դիմացինի վերաբերմունքն ընկալելու, ճիշտ ըմբռնելու կարողություն: Այս ամենի առկայությամբ կրթադաստիարակչական գործընթացը կլինի արգասաբեր, իսկ ուսուցիչը կարող է գրանցել հաջողություն՝ կրթել ու դաստիարակել կարողունակ, բարեվարք, նախաձեռնող, գիտելիքների անսպառ պաշարով ու ինքնուրույն սովորողներ: Քանզի այսօրվա դպրոցի ուսուցչի վեհ կոչումն է՝ հավատարիմ մնալ մայրենի լեզվի առաջավոր ավանդույթներին՝ նրա գեղարվեստական հուժկու խոսքն ու բարձր գազափարները փոխանցել սերունդներին, դյուրին դարձնել նրա ընկալումն ու յուրացումը:

Ինչպես նշեցինք հետազոտության սկզբում, նաև մեր նպատակն է, առակի ուսուցումը ներկայացնել նորովի, այսինքն՝ ինտերակտիվ մեթոդներով և ևս մեկ անգամ արժևորել դրանց դերը սովորողների մեջ ժողովրդավարական արժեհամակարգի ձևավորման և դաստիարակության հարցում: Առակների բարոյախրատական, դաստիարակչական նշանակությունը հաշվի առնելով՝ կարելի է պնդել, որ նրանք մինչ այժմ պահպանել են իրենց արդիականությունը և դաստիարակչական հզոր զենք են ուսուցչի ձեռքին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Դոլուխանյան , Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006:

2. Ա. Դոլուխանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008:

3.Ա. Գալստյան, Թ. Թովմասյան, Մայրենի 5, Երևան, 2023:

4. Ճարուրյան Հայկանուշ, Հիսուս Քրիստոսի կերպարը հայ և ամերիկյան գրականության մեջ, ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Երևան, 2014:

5. 7. Ա. Սարգսյան, Հայոց լեզվի և գրականության համառոտ ուղեցույց, Երևան, 2007:

6. https://www.arlis.am/documentview.aspx?docid=74345 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 2:

7. https://m.youtube.com/watch?v=J-l_DhZwiec

Հավելված 1

Դասի պլան

Ուսուցիչ՝ Կ. Հարությունյան **Ամսաթիվ՝** ----. ----. 2023թ.

Դասարան՝ Հինգերորդ

Առարկա՝ Մայրենի

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդման դաս

Դասի թեման՝ Հիսուսի առակներ. «Երեք ծառաների առակը»

Դասի նպատակները.

1. Հասկանալով, վարժ և արտահայտիչ կարդալ տեքստը, ընկալել տեքստի իմաստը:

2. Կարողանալ հանգամանորեն բնութագրել հերոսներին՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները:

3. Խթանել սովորողների ինքնուրույն խոսքը և դատողություններ անելու կարողությունը:

Դասի կահավորումը՝ դասագիրք, Մանուկների աստվածաշունչ, համակարգիչ՝ միացված համացանցին, քարտեր:

Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ և հնարներ՝ «Հարցերի տարափ», «Ուղղորդված ընթերցանություն», «ԳՌԻՍ», «Ընթերցողի թատրոն», «5 րոպեանոց շարադրանք»:

Դասի վերջում աշակերտները կկարողանան՝

● Գեղարվեստական տեքստը կարդալ մտքում, ապա՝ բարձրաձայն ու արտահայտիչ:
●Հասկանալ տեքստը և մեկնաբանել գործող անձանց բնավորությունները:

● Բանավոր վերարտադրել առակը, նշել հիմնական գաղափարը :

Միջառարկայական կապը՝ Աստվածաշունչ, հայոց եկեղեցու պատմություն, կերպարվեստ:

Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ՝ պատճառ և հետևանք

Դասի ընթացքը՝

Խթանման փուլ

➢ Մինչ բնագրի ընթերցումը աշակերտներին առաջադրել հետևյալ հարցերը.

• Աստված մարդուն տալի՞ս է առաջ գնալու հնարավորություն:

• Ի՞նչ եք կարծում, եթե մարդ չի կարողանում իրեն տրված հնարավորությունը օգտագործելով շատացնել ունեցվածքը, պետք է հե՞տ վերցնեն ամբողջը ձեռքից:

Զրույց ծավալելով հետազոտության արդյունքների շուրջ՝ պարզ է դառնում, որ դասի թեման երեխաներին հետաքրքիր է, այն նրանց հուզում է, և իրենք ցանկություն ունեն զրուցելու այդ թեմայով:

Այնուհետև ԳՈՒՍ աղյուսակում գրառել՝

- Գիտեմ որ
- Ուզում եմ իմանալ
- Սովորեցի

Իմաստ ընկալում

2.Անդրադարձ վերնագրին և առակի բովանդակության կանխագուշակում

Այսօր մենք ընթերցելու ենք մի առակ, որի վերնագիրն է՝ **«Երեք ծառաների առակը»:** Դատելով մինչ այս պահն իրականացրած քննարկումներից, ի՞նչ եք կարծում, ինչի՞ մասին կլինի առակը (ներողամտության, հիշաչարության, մեծամտության, անարդարության):

Աշակերտներն ուղղորդված ընթերցանությամբ կարդում են առակը: Դադարներից հետո պատասխանում են հարցերին («Ի՞նչ է լինելու հետո», «Ինչու՞ եք այդպես կարծում»), նշում են այն բառերը կամ արտահայտությունները, որոնք դժվարացել են հասկանալ:

Կանխատեսման ուղեցույց

1) Ի՞նչ է լինելու հետո
2) Ինչու՞ եմ այդպես կարծում
3) Ի՞նչ եղավ
4) Հորինի՛ր վերնագիր և նոր ավարտ:

Այնուհետև աշակերտները խմբային աշխատանքով ավարտում և ընդհանրացնում են պատմությունը, վերնագրում այն, ապա ներկայացնում իրենց շարադրանքները (գնահատանք դրսևորելով): Կատարվում է քննարկում և մտքերի փոխանակում:

3.**Աշխատանք ընթերցողական կարողությունների զարգացման և տեքստի պլանի շուրջ:**

Առակը ընթերցելուց հետո որոշելու համար, թե ինչպես են աշակերտները հասկացել տեքստը, ուսուցիչը հարցեր է առաջադրում նրանց.

● Ինչո՞ւ տերը արծաթ բաժանեց ծառաներին:

● Ծառաներն ինչպե՞ս օգտագործեցին արծաթները: :

● Ճիշտ վարվե՞ց տերը երրորդ ծառայի հետ:

● Բնութագրի՛ր ծառաներին:

Հարցերի միջոցով ամբողջացնում են թեման, և սովորողներին բաշխվում է «Ընթերցանությունից հետո» թերթիկը (անհատական աշխատանք):

Անուն, ազգանուն:

Առակի վերնագիրը:

Ամսաթիվ:

✓ Ստեղծագործության հիմնական գաղափարներ :

✓ Ո՞ր հերոսն է քեզ սրտամոտ, ինչու՞:

✓ Թվարկեք այն բառերը, որոնք ձեզ անծանոթ են, փորձեք տալ դրանց բացատրությունը:

✓ Ի՞նչ էր ուսուցանում այս առակը:

Աշխատանքն ավարտելուց հետո խմբերն իրենց թերթիկները փոխանակում են՝ **փոխադարձ գնահատման և դրա հիմնավորման նպատակով**: Կատարվում են քննարկում և մտքերի փոխանակում:

Հետադարձ կապ («Ո՞ր ստեղծագործության հետ կարելի է համեմատել»):

Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է մեկ անգամ ևս ընթերցել տեքստը, և այն բաժանել դերերի (հեղինակ, տեր և երեք ծառաներ): Մասնակիցներն իրենց դերերը կնշեն նշագրիչներով: Աշակերտները դատում են այն մասին, թե ինչպես պետք է խոսեն առակի գործող անձինք, ինչպիսի ժեստեր և դիմախաղ կարող են դրսևորել:

4.Տեքստի վերարտադրում և ստեղծագործական առաջադրանքների կատարում:

Սեփական հնարավորությունները հստակեցնելու և համոզվելու համար, որ կարող են հարմարվել տվյալ դերին, աշակերտները պետք է ուշադիր ուսումնասիրեն տեքստը:

«Ընթերցողի թատրոնի» մասնակիցները զբաղեցնում են իրենց տեղերը: Նրանք իրենց ձեռքում ունեն «սցենարի» մասերը, կամ այն դրված է սեղանի վրա: Մասնակիցներն ընտրում են տեղ զբաղեցնելու իրենց համար ցանկալի տարբերակը, միայն թե այնպես, որ չմոռանան «հանդիսատեսին»:

Հարկավոր է օգնել աշակերտներին, որ նրանք կարողանան ճիշտ դիրք զբաղեցնել (ցանկալի է, որ և՛ հանդիսատեսը լավ տեսնի մասնակիցներին, և՛ մասնակիցները ՝ միմյանց), այնուհետև սկսել տեքստի ընթերցումը:

Սովորողները նախապես որոշած չափանիշների համաձայն գնահատում են իրենց ընկերներին:

Սանդղակի վրա 10 միավորը բարձրագույն գնահատականն է: Ամեն վանդակում շրջագծեք միավորը և այդ որոշման հետ գրեք ձեր գնահատականի համառոտ պատճառաբանությունը: Ծանոթություն.

Բոլոր բառերը պա՞րզ էին արտասանվում:

Տրամադրվածությունը և զգացմունքները համապատասխանու՞մ էին ընտրված դերին:

Հաստատվո՞ւմ էր տեսողական կապ լսարանի հետ:

Կարողացա՞վ գրավել և պահպանել լսարանի ուշադրությունը:

Այսպիսով՝ աշակերտները վերլուծելով և գնահատելով սեփական աշխատանքը, հասկանում են, թե ինչն են լավ արել, ինչը բարելավման կարիք ունի:

Այս փուլին բնորոշ է հետևյալ խնդիրը.

ա/ Ուժեղ և թույլ կողմերի բացահայտումից հետո խոսքի բարելավման համար անհրաժեշտ ուղիների որոնում (այստեղ աշակերտները կարող են օգտագործել ուսուցչի, համադասարանցու և ուրիշ ունկնդիրների խորհուրդները: Երբ նրանք դատողություններ են անում իրենց ելույթների և խոսքային գործունեության վերաբերյալ, պետք է լսեն ու հաշվի առնեն նաև իրենց համադասարանցիների մեկնաբանությունները: Դրանք կարող են լինել գրավոր կամ բանավոր, ինչպես նաև երկուսի համադրությունը):

բ/ Աշակերտի խոսելու ունակությունն ամենից լավ զարգանում է շարժընթացային, փոխգործուն ուսումնական միջավայրում: Այդ գործընթացում բավական ժամանակ է տրամադրված լսելու և մտքերի փոխանակման հմտությունների ձևավորմանը: Ինչ վերաբերում է նման մեթոդով կազմակերպվող դասի պայմաններին, ապա հիշեցնենք՝ դասասենյակը պետք է լինի այնպիսին, որտեղ աշակերտը կարող է հարցեր տալ և պատասխանել դրանց: Ուսուցիչը և աշակերտը գործընկերներ են. նրանք համագործակցում են, տեղեկություններ և գաղափարներ փոխանակում: Դասապրոցեսի կազմակերպման տարբեր ձևերը (առաջադրել այնպիսի հարցեր (բացահայտ), որոնք պահանջում են տարբերվող կարծիքներ և աշխատանք զույգերով, փոքր և մեծ խմբերով) աշակերտին տալիս են լսելու և բանավոր խոսքի ունակությունները գործնականում փորձարկելու հնարավորություն: Բանավոր խոսքի ունակության զարգացման հարցում ուսուցչին վերապահված դերը ներառում է հետևյալ խնդիրները լուծելու պատրաստակամությունը.

- Աշակերտին հնարավորություն տալ հավաքել տեղեկություններ, պատրաստել հարցեր:
- Ուղղորդել աշակերտին՝ նոր գիտելիքը կառուցել արդեն յուրացված տեղեկատվության վրա:

- Առաջադրել հարցեր, որոնց համար գոյություն չունի մեկ ճիշտ պատասխան (բաց հարցեր):
- Օժանդակել նպատակաուղղված խոսքի և «բարձրաձայն մտածելու» գործընթացի կայացմանը:
- Առավել ուշադրություն դարձնել աշակերտների կողմից կարծիքների արտահայտման և պատասխանների ձևակերպման բնույթին, այլ ոչ թե խոսելիս թույլ տված քերականական սխալներին:
- Աշակերտների հետ մշակել խոսքի գնահատման չափանիշներ:
- Օժանդակել համադասարանցիների մասնակցությանը աշակերտի խոսքի գնահատմանը, որի ժամանակ նշված կլինեն ոչ միայն ուժեղ և թույլ կողմերը, այլև թերությունների շտկման ուղիները:
- Հարցերը գնահատել նույն ձևով, ինչպես պատասխանները:
- Մշտապես հետևել սեփական խոսքին և այն կառուցել այնպես, որ աշակերտների համար լինի օրինակելի նմուշ:
- Դասարանում ապահովել աշակերտների խոսքը բոլորին հասանելի և ընկալելի դարձնող պայմաններ (լռություն դասարանում, հարմարավետ տեղադրած դասարանական կահույք և այլն):
- Ոչ պաշտոնական զրույցները, մտքերի փոխանակումը և հետաքրքիր փաստերին ծանոթացումը դարձնել մշտական գործելակերպ:

Կշռադատման փուլ

5.Անդրադարձ և ամփոփում

Կարելի է կազմակերպել խաղ-վարժանք՝ «Շնորհալի մարդիկ» խորագրով:

Այսպես՝ սովորողները բաժանվում են խմբերի: Յուրաքանչյուր խմբին տրվում է քարտեր՝ տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց նկարներով: Խմբերը պետք է նկարագրեն, թե ինչպես այդ մասնագիտությունների տեր մարդիկ կօգնեն այլ մարդկանց, եթե լինեն շնորհալի, կարեկցող կամ վնասեն, եթե լինեն անկար և անարդար: Օրինակ՝ **շնորհալի մարդը ավելի մեծ հեղինակություն կվայելի շրջապատի կողմից, քան անկար և անարդար մարդը, ով մշտապես կարժանանա մարդկային անտարբերությանը:**

Կարելի է կիրառել «Անավարտ նախադասություններ» մեթոդական հնարը.

Ես իմացա, որ.....

Ես պետք է .....

Ընթերցելով «Երեք ծառաների առակը»՝ ես մտածեցի, որ .....:

Տնային հանձնարարություն - Բանավոր վերարտադրել առակը և մտորել գաղափարի շուրջ: «Եթե ընկերդ շնորհալի չէ, ինչպես կվարվես դու» թեմայի շուրջ խորհել և ներկայացնել սեփական տեսակետը: